[1] Դուրս գրման ամսաթիվ		
13	Սեպտեմբեր	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
13	Սեպտեմբեր	2019 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	1563879505

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ		

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7	
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)								
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[13] Լրացուցիչ տվյալներ									

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի									
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3	
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն	N 900011000834							
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[18] Լրացուցիչ տվյալներ									
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր	Համար							
		Ամսաթիվ							
[20] Մատակարարման (առաքման) եղանակը									
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 90453518բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

13/09/2019 12:42:48

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

31 հուլիսի 2019թ. **ք. Վանաձոր**

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ա.Կոբալյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 90453518 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Լոռու մարզի Հագվի գյուղի բնակիչ, 31.12.1999թ-ին ծնված Էրիկ Սարգսի Պեպանյանը 12.02.2015թ-ին Թումանյանի զինկոմիսարիատում հետազոտվել է կցագրման բժշկական հանձնաժողովի կողմից, ճանաչվել պիտանի և հաշվառվել զինկոմիսարիատում: Դրանից հետո 2016թ-ի մայիս ամսին վերջինս մեկնել է ՌԴ և խուսափել է ժամկետային զինվորական ծառայության հերթական՝ 2017 թվականի ձմեռային զորակոչից՝ այդ ծառայությունից ազատվելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայությամբ:

Դեպքի առթիվ 05.03.2018թ-ին ՀՀ ՔԿ ԶՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ:

16.06.2019թ-ին ՀՀ ոստիկանության ԼՄՎ Թումանյանի բաժնից գրություն է ստացվել այն մասին, որ Էրիկ Պեպանյանը 16.06.2019թ-ին հայտնաբերվել է <<Զվարթնոց>> օդանավակայանում և նույն օրը, ժամը 07:40-ին տեղափոխվել է ՀՀ ՈԼՄՎ Թումանյանի բաժնի ՁՊՎ, որտեղից էլ 16.06.2019թ-ին, ժամը 13:00-ին Էրիկ Պեպանյանը տեղափոխվել է ՀՀ ՔԿ ԶՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժին:

16.06.2019թ-ին որոշում է կայացվել քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին: Նույն օրը Էրիկ Պեպանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով, որում նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել և պատրաստակամություն հայտնել զորակոչվել ՀՀ ԶՈՒ:

16.06.2019թ-ին որոշում է կայացվել խափանման միջոց կալանավորումը փոփոխելու մասին և Էրիկ Պեպանյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին:

16.06.2019թ-ին Լոռու մարզի զինվորական կոմիսարին գրություն է ուղարկվել Էրիկ Պեպանյանին զորակոչային խմբում ընդգկելու, առաջնահերթության կարգով հերթական զորակոչի բժշկական հանձնաժողովին ներկայացնելու և զորակոչման հարցը լուծելու համար:

2019թ-ի ամառային զորակոչին Էրիկ Պեպանյանը հետազոտվել է զորակոչային բժշկական հանձնաժողովի կողմից և ուղեգրվել ք.Երևանի <<Ավան>> ՀԲԿ, որտեղ նրա մոտ ախտորոշվել է՝ <<անձնային գծերի շեշտվածություն, կրկնվող իրավիճակային ռեակցիաներ, ինքնավնասումներով>>: Դրանից հետո, 12.07.2019թ-ին Էրիկ Սարգսի Պեպանյանը ներկայացել է ԿԲՀ-ի նիստին և նրա մոտ ախտորոշվել է՝ <<անձնային գծերի շեշտվածություն, կրկնվող իրավիճակային ռեակցիաներով, հակասոցիալական

վարքագծերով>> ու համաձայն ՀՀ կառավարության թիվ 404 որոշմամբ հաստատված ցանկի 7-րդ հոդվածի Բ կետի Էրիկ Սարգսի Պեպանյանին տրվել է տարկետում 3 տարի ժամանակով:

Նկատի ունենալով, որ Էրիկ Սարգսի Պեպանյանի մոտ առկա հիվանդությունները և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզի դատահոգեբուժական հանձնաժողովի փորձագետներին:

2. Փորձաքննությանը ներկայացնել Էրիկ Սարգսի Պեպանյանին և վերջինիս անձնական գործը:

3. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Էրիկ Սարգսի Պեպանյանն որևէ հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի և երբվանից, այդ հիվանդությունն արտաքին դրսևորումներ ունենում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի.

բ/ Էրիկ Սարգսի Պեպանյանը <<անձնային գծերի շեշտվածություն, կրկնվող իրավիճակային ռեակցիաներով, հակասոցիալական վարքագծերով>> ախտորոշումով տառապում է, թե ոչ, եթե այո, ապա երբվանից:

գ/ 2017 թվականի ձմեռային զորակոչին Էրիկ Սարգսի Պեպանյանը տառապել է <<անձնային գծերի շեշտվածություն, կրկնվող իրավիճակային ռեակցիաներով, հակասոցիալական վարքագծերով>> ախտորոշումով, թե ոչ:

4. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն մտնում են համապատասխան փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար, խնդրում եմ պատասխանել նաև դրանց:

5. Փորձագետներին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրանց իրավունքները և պարտականությունները:

Միաժամանակ փորձագետներին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալներ հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ **Ա.Ա.Կոբայյան**